ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 43-Ա

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ N 9 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով.

ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Լուսառատ համայնքի ավագանու N 9 նիստի հետևյալ

ՕՐԱԿԱՐԳԸ՝

1.ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ>> ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ՁԵԿ. Ա. ԵՄԻՇՅԱՆ/

2.ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ:

/ՁԵԿ. Դ. ՀԱԿՈԲՅԱՆ/

3.ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.11.2020թ <<ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ՁԵԿ. Ա. ՔԵՇԻՇՅԱՆ/

4.ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2020Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ՋԵԿ. Ա. ԵՄԻՇՅԱՆ/

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 44-Ն

ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ <<ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2021Թ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ>> ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Լուսառատ համայնքի տարածքում 2021թ համար սահմանել տեղական տուքերի և վճարների ստորև ներկայացված դրույքաչափերը.

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրք սահմանել՝

հիմնական օբյեկտների համար՝

ա.մինչև 300քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար-5000 դրամ

բ.սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 10 000 դրամ,

բբ.501-ից մինչև 1000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17 000 դրամ,

բգ.1001-ից մինչև 3000քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 17 000 դրամ,

բդ.3001-ից ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35 000 դրամ

Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ)մինչև 20քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 դրամ,

դ)20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1700 դրամ.

2)Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի / համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա)չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ

բ)բացի օբյեկտի վերնակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների/ այդ թվում ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով.

գ.նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների, /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն , որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 1700 դրամ:

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1)ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ

բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում ՝ 4000 դրամ

գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

դ.101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ

ե.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ

զ.501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 18000 դրամ

2.ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա.մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3500 դրամ

բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4000 դրամ

գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 5000 դրամ

դ.101ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 7000 դրամ

ե.201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 դրամ

զ.501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 18 000 դրամ

5.Համայնքի տարածքում՝

ա)բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 120 դրամ՝ 1քմ-ի համար

բ)համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եամսյակի համար սահմանվում է՝ հիմնական շինությունների ներսում՝

ա)մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1500 դրամ

բ)26-ից մինչև 50 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ

գ)51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 դրամ

դ)101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 5000 դրամ

ե)201-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 դրամ

զ)501 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10000 դրամ

ոչ հիմնական շինությունների համար՝

ա.մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 300 դրամ

բ.26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 600 դրամ

գ.51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 դրամ

դ.101-ից մինչև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 դրամ

ե.201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկի համար՝ 10 000 դրամ

գ)Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10000 դրամ

դ)Խանութներում, կրպակներում, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 20000 դրամ

5.1 Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առուվաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 17000դրամ

6.Համայնքի տարածքում առևտրի հանրային սննդի, զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկները, բաղնիքները/սաունաները/, խաղատները ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

ա)առևտրի օբյեկտների համար՝ 15000 դրամ

բ)հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 30000 դրամ

գ)բաղնիքների /սաունաների/ համար՝ 150000 դրամ

դ)խաղատների կազմակերպման համար՝ 300000 դրամ

ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 150000 դրամ

զ)վիճակախաղերի կազմակերպման համար՝ 50000 դրամ

7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ-ի տեղական տուրքը սահմանվում է՝

ա)ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային % արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 700 դրամ

բ) թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային % /արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

գ)այլ արտաքին գովազդի համար՝ 500 դրամ

դ)սոցիալական գովզդի համար՝ 0 դրամ

7.1. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդի դատարկ գովազդային վահանակների մեկ քմ-ի դիմաց սահմանվում է տեղական տուրք՝ 125 դրամ

7.2.Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը, ապա համայնքի բյուջե պետք է վճարի յուրաքանչյուր քմ-ի համար՝ 50 դրամ8.Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0 դրամ

8.1. Համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 50000 դրամ

9.Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ յուրաքանչյուր մեքենայի համար՝3500 դրամ

9.1. Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարություն ծառայություններ իրականացնելու համար սահմանվում է՝ 170 000 հազ. դրամ

10.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝

ա)3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 834000 դրամ

բ) 5հա-ից մինչև 7հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 1700000 դրամ

գ)7հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2350000 դրամ

դ)10հա և ավելի մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 դրամ

Կիրառված է 0,3 գործակիցը:

11.Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող.

ա)հողերի մրցույթ կազմակերպելու դեպքում մասնակիցներից վճար՝ 500 դրամ

բ)հողերը օտարելու, աճուրդ կազմակերպելուդեքում մասնակիցներից վճար՝ 5000 դրամ

12.Խմելու ջրի սակագին սահմանել յուրաքանչյուր անսվա համար՝

ա)ջրաչափի առկայության դեպքում-160դրամ

բ)ջրաչափի բացակայության դեպքում մեկ շնչի համար-500 դրամ

գ)փողոցներում տեղադրված ընդհանուր ծորակից օգտվող բազմաբնակարան շենքերի բնակիչների համար՝ մեկ շնչին-250 դրամ

13.Աղբահանության վճարի սակագին սահմանել յուրաքանչյուր ամսվա համար՝

1)Ազգաբնակչությունից -1 շնչի հաշվով-120 դրամ

2.Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից.

1.Կրթության, մշակույթի, առողջապահական շինություններից 1քմ-2 դրամ

2.Առևտրի, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ մատուցող շինություններից 1քմ-20 դրամ

14.Համայնքի սպասարկող անասնաբույժի ծառայությունների դիմաց տեղական վճարի դրույքաչափ սահմանել՝

ա)Կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն-1500 դրամ

բ)Ծննդօգնություն թեթև միջամտության դեպքում-3000 դրամ, ծանր միջամտության դեպքում- 10000 դրամ

գ)Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների մունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում / բացառությամբ <<գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների/ մանր եղջերավոր անասունների համար՝ 500 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար՝ 1000 դրամ

դ)Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար՝ 2000 դրամ

ե)Ախտահանության 1 քմ-ի համար՝ 500 դրամ

զ)Միջատազերծում /դեզինսեկցիա/ 1քմ-ի համար՝ 500 դրամ

է)Արհեստական սերմնավորման համար՝ 8000 դրամ

ը)Կենդանու բուժում՝ 5000 դրամ

յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար՝ 2000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար՝ 5000 դրամ

թ)Կրծողների ոչնչացում / դեռատիզացիա/ 1քմ-ի համար՝ 300 դրամ

ժ)Կենդանիների նախասպանդային զննում

-մանր եղջերավոր անասունների համար՝ 2000 դրամ

-խոշոր եղջերավոր անասունների համար՝ 3000 դրամ

Ընթացիկ տարվա համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի փոփոխություն չի կարող կատարվել:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 45-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 28-րդ կետերով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Հավանություն տալ և հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած՝ համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը, համայնքապետարանի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների ներքոհիշյալ աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1.Աշխատակիցների թվաքանակը-11

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը.

h/h	Հաստիքի անվանումը	դրույքային միավորը	պաշտոնային դրույքաչափը /ՀՀ դրամ/

1	2	3	4
1	Համայնքի ղեկավար		295 000
	Հայեցողական պաշտոններ		
2	Իրավախորհրդատու	0.5	120 000
	Համայնքային ծառայության պաշտոններ		
3	Աշխատակազմի քարտուղար /1.2-1/	1	185 000
4	Աշխատակազմի գլխավոր մասնագետ /2.3-1/	1	183 000
5	Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/	1	170 000
6	Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1/	1	153 000
7	Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ	1	137 700
	Քաղաքացիական աշխատանք		
8	Համակարգչային օպերատոր	1	105 000
9	Աղբի և խմելու ջրի հսկիչ- հարկահավաք	1	100 000
	Տեխսպասարկման անձնակազմ		
10	Համայնքապետարանի տեխնիկական աշխատող	1	90 000
11	Այգեպան	1	90 000
	ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ		
	1.Աշխատակիցների թվաքանակը-6		
	2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը		

	Քաղաքացիական աշխատանք		
1.	Մշակույթի տան տնօրեն	1	105 000
2.	Գրադարանավար	0,5	100 000
3.	Երգչախմբի խմբավար	1	95 000
4.	Պարուսույց	1	95 000
5.	Սպորտ. կազմակերպիչ	1	95 000
	Տեխսպասարկման անձնակազմ		
6.	Մշակույթի տան և գրադարանի տեխնիկական աշխատող	1	90 000
	<<ՄԱՆՉՈՒԿ>> ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ 1.Աշխատակիցների թվաքանակը -17 2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը		
1.	Քաղաքացիական աշխատանք		
1.	Մանկապարտեզի տնօրեն	1	145 000
2.	Մանկապարտեզի հաշվապահ	0,5	125 000
3.	Մանկապարտեզի բուժքույր	0,75	95 000
4.	Մանկապարտեզի դաստիարակ	3,36	111 000
5.	Մանկապարտեզի դաստիարակի օգնական	3,3	91 000
6.	Մանկապարտեզի երաժիշտ	0 75	100 000
7.	Մանկապարտեզի տնտեսվար	0,5	125 000
8.	Մանկապարտեզի խոհարար	1	95 000
9.	Մանկապարտեզի խոհարարի օգնական	0,5	93 000
10.	Մանկապարտեզի պարուսույց	0,5	104 000

	Տեխսպասարկման անձնակազմ		
11.	Մանկապարտեզի պահակ	1	93 000
12.	Մանկապարտեզի լվացքարար	0,25	100 000
13.	Մանկապարտեզի հավաքարար	0,5	96 000
14.	Օժանդակ բանվոր	0,5	93 000
15.	Դերձակ	0,25	100 000

3.Համայնքի մանկապարտեզի ծնողական գումարը սահմանել 5000 դրամ:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 46-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 05.11.2020թ <<ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

1.Համայնքի ավագանու 05.11.2020թ <<Լուսառատ համայնքի համայնքային սեփականություն համարվող հողամասըվարձակալության տրամադրելու մասին>> N 38 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

-որոշման 1-ին կետը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. <<Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն համարվող 03-049-0141-0008 ծածկագիրը կրող գյուղատնտեսական նշանակության 6.63563 հա վարելահողը՝ գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 25 տարի ժամկետով՝ մինչև 10.02.2020թ, մրցութային կարգով տրամադրել վարձակալության:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԼՈՒՍԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Լուսառատի համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ. Լուսառատ; lusarat@bk.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 47-Ա

ԼՈՒՍԱՌԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ 2020Թ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին.

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային 2020թ բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

Վարչական բյուջեի

Նախադպրոցական կրթություն 900422104159 հաշվի 09-01-01-51 գործառնական և տնտեսագիտական դասակարգման 4511 հոդվածից պակասեցնել 200,0 հազ. դրամ

այն ավելացնել վարչական բյուջեի

սոցիալական հատուկ արտոնություններ 900422104134 հաշվի 10-07-01-54 գործառնական և տնտեսագիտական դասակարգման 4726 հոդվածին:

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ԳԱՍՊԱՐ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱԼԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՍԱՐԳՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ՏԵՐՏԵՐՅԱՆ ՏԱՐՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԴԱՆԻԵԼ ՀԱԿՈԲՅԱՆ**